

# ԾԻՍԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԸ ՀԱՅՈՑ ՄԵԶ

ԸՆԹ Հ. ԱՊԵԽԱՅԵՐԻ

Ե. ԼՈՒՅԱՅԵՎԱՆԻ

Զ. ԳԼՈՒԽԻ<sup>\*)</sup>

ԱՌԱՋՈՑՆԱՅՐ

ԱՅ. Անվիսն ու կլարկը պատմում են, թէ երբ իրենք անապնկալ կերպով մօտեցան մի քանի Շօղանների, ժրանցից երկուսը, մի հասակաւոր կին և մի փոքրիկ աղջիկ, նկատելով որ մենք արդէն շատ մօտիկ էինք իրենց, այնպէս որ այնու չէին կարող փախէել նստան գետնին և խոնարհեցրին գլխաները, յանձն առնելով մօտը, որ կարծում էին, թէ սպասում է իրենց: Այս միհնային սովորութիւնը՝ խոնարհեցնել զուտիք՝ երբ թէ հրաւիրում են թշնամուն հասցնելու հարուածը՝ երբ արդէն խուսափելու յոյսը բոլորովին կարուած է, դեռ ևս յարատենում է մեր այժմեան նգիպտոսումը: Այս սովորութիւնը յաղթողի շնորհն անսահման հնազանդութեամբ գրաւելու փորձի մի օրինակ է և այս ցանկութիւնից յառաջացած գործողութիւնները կազմում են ողջ յնների սկիզբը:

Երբ այս հետազոտութեան սկզբում ես կամնենում էի մի օրինակով ցոյց տալ, որ ծիսակատարութիւնը նախընթաց է ոչ միայն հասարակական, այլև մարդկային զարգացման, ես յիշեցի փոքրիկ սկունդի վարդունքը, որ ընկնում է մէջբի վրայ իրեն զարնուրեցնող զամբուը տեսնելիս, զուցէ ընթերցողներից շատերը մատածեցին, թէ այս վարժունքի մասին իմ տուած բացատրութիւնը փոքր ինչ բռնազրուի էր: Դրանք այդ կասկածը չէին

<sup>\*)</sup> Տես Աղդադբական Հանգէս XXI, XXIII. և XXV.

ամանիլ, եթէ գիտենային, որ մարդկանց մէջ էլ այդպիսի վարժունք կայ: Ենթանք ընկնում են մէջբներին գետնի վրայ, առում է Լեյլինդուսնը՝ նկարագրելով Բատովկաների ողջոյնի ձեւը, մի կողքից միւն են դառնում և խփում ազդրներին ի նըշան չնորհակալութեան և ընդունելութեան: Այս վարմունքը, որ նշանակում է՝ դուք այլն կարիք չունիք ինձ նուանելու, ես արդէն ստորագրուած եմ ձեզ, փրկութեան ամենալաւ միջոցն է: Ընդգիմութիւնը գրառում է աւերիչ բնազդները, իսկ մէջբի վրայ պառկելով իմաց է արւում, որ այլն մտազիք չեն հակառակելու: Մի ուրիշ վարմունք էլ կայ, նոյնպէս յուսահատական, որ փոքր ինչ բարդ ձեռվ է արտայայտում մարդու կատարեալ ստորագրութիւնը: «Տանգա-Տարուում... համայնքի անդամները ցոյց են առլիս իրենց մէջ զօրապետին ամենամեծ յարդանքը, որ կարեի է հրեակայել. նրանք ընկնում են նրա առջն, և նրա ուղ գնում իրենց վզի վրայ: Մինոյն սովորութիւնն Աֆրիկայումն էլ կայ: Ֆունդան թագաւորի պատգամաւորները, առում է Լերդը, հերթով ընկան առջն, և ոստ դրին իրենց վզի վրայ: Հին աշխարհի պատմական ազգերի մէջ էլ այս դրութիւնը, որ պարտութեան հետևանք է, գարձել է հպատակութեան նշան:

Այս նախնական ձևերից, որոնք ներկայացնում են պարտուած յաղթողի ուների տակ, ծագում են այն ողջոյնները, որին զանազան ձևերով արտայայտում են սարկի ստորագրութիւնը: Խըր ափրոշը: Ստորագրութեան այս միենոյն ձեւը դոյսութիւնն է ունեցել հնումը և Արևելքում, ինչպէս երևում է Հետեւեալ օրինակից: Ենւ զգեցան քուրճն ի մէջս իւրեանց, և եղին չուանս ի զլուխս իւրեանց և առեն ցարքայն իսրայէլի: ծառայ քո որդի Աղերայ ասէ: Կեցցէ անձն իմա: (Թ. թագաւորաց Խ. 32): Պերուում, ուր զինուորական կազմակերպութիւնն անշափ յառաջացած էր, իրը հպատակութեան նշան կապում էին իրենց ձեռները և վզովը թուկ ձգում: Այս երկու զեպքումն էլ մարդիկ յաժարակած ենթարկում են իրենց այն կապանքներին, որ հնումը կրում էին պատերազմի դաշտից բերուած գերիները:

Ուշագրաւ է, որ հայերիս մէջ, ինչպէս օրինակ Կաղզուանում, խելագարների վիզը խոտէ կեմ են ձգում և տանում մի որոշ ուխտատեղի, Կաղզուանում Շեռնարհ կտուրը, բժշկութիւն հայցելու, բացատրելով այս երևոյթը նըանով, որ խելագարութիւնը յառաջացել է մի սրբի դէմ ցոյց տուած ըմբոստութիւնից և կեմը վիզը ձգած նրա դուռը զնալը արտայայտութիւնն է կատարեալ հնազանդութեան: Ինկայի առջև սովորկութիւնն այդ ձեւով ցուցադրելուց զատ՝ միաժամանակ զործադրում էր և մի-

ուրիշ ձեւ հպատակութիւնն արտայայտում էին նաև որևէ բռնկրելով. և Առահուալպային ներկայանալիս մի որևէ ծանրութք կրելը մի ծիսակատարութիւն էր համարում, որ պարտաւոր էին կատարել այս երկրում իշխող բոլոր մեծամեծները:

Ես սկսեցի այս տարապայման օրինակներով, որպէս զի ցոյց առմ ողջոյնի բնական ժագումը, որ գործադրում էր որպէս շնորհ հայցիլու միջոց նախ յազթողից և ապա կառավարչից: Սակայն ողջունի մասին լիսկատար և ճիշտ գաղափար կազմելու համար հարկաւոր է մի բանի վրայ ևս ուշադրութիւն դարձնել: Այս աշխատութեան առաջին զվարում ես արդէն ցոյց տուի, որ հաճոյքի շատ նշաններ, որոնք բնահոգերանական ծագումն ունին և արտայայտում են սիրելի անձերի ներկայութեամբ, դառնում են ողջոյնի ծէսեր, որովհետեւ մարդկանց հաճելի է մտածել, որ սիրում են իրենց ահմանել, հատեաբար և ուրախանում են՝ երբ արտայայտում են այդ սէրը: Այսպէս որ երբ աշխատում են գրաւել-մեծի շնորհը՝ արտայայտելով իրենց հպատակութիւնը, ուղարքար մի ճիզ էլ աւելի են թափում ցոյց առլու իրբ նրա ներկայութիւնից յառաջացած ուրախութիւնը: Այսպէս հայերիս մէջ ևս Ախալցիոսցիները երբ մինին հարցնում են թէ թնչպէս է՝ պատասխանում է. Լաւ, քեզի տեսայ, տահա լաւ եղայ:

Ի նկատ ունենալով ողջոյնի այս երկու տարրերը՝ սկսենք քննել այս ծիսի զանազան ձեւերը քաղաքական, կրօնական և հասարակական կազմակերպութիւնների մէջ:

Ա. Թէպէս երեսն ի վայր գետնին ընկնելը դեռ ենթադրել մի տալիս ուժի այսպիսի կորուստ, որ այլևս բոլորովին հնար ընինէր ընդդիմագրելու, ինչպիսին կարծել է տալիս մէջին վրայ ընկածի դրութիւնը՝ սակայն և այսպէս՝ զա արգէն բաւական է կատարեալ հպատակութեան և յարգանքի արտայայտութեան նշան ժամայելու ծեւ այս վարմունքը համարում է ողջոյնի մի ձեւ այն բոլոր երկրներում, ուր բռնակալութիւնը աիրում է կատարելապէս և ուր հպատակութիւնն սարկութեան բնոյթ է կը րում: Հրճ Ամերիկայում, չիշչաների մէջ չկացիկի մօս եկողները պէտք է ընկնելին նրա սաները և այն էլ այսպէս, որ երեսը զար գետնին: Մինայնը տեղի է ունենում և Աֆրիկայում: Թագաւորին մերձնցող Բորգոսը պէտք է պառկի գետնի վրայ: Ասիան մեզ տալիս է այս տեսակի բազմաթիւ օրինակներ: Շնորհը կամ պանուն, որ գալիս է զանգատուելու, ընկնում է երեսնի վայր գետնին, մեացնելով ձեռները: Միամի թագաւորութեան մէջ, ազնուականների բոլոր ստորագրեաներն ընկնում են իրենց աէրերի և վերջններս էլ, իրենց հերթին, թագաւորի սաները:

Հայերիս մէջ յանախ գործածուող տՅոաքդ եմ ընկէց, յօդացդ հազն եմք, յօմքդ պազնեմք, յյոտացդ մեռնիմք դարձուածքները մացորդ են այդ սովորութեան:

Միհնոյնը և Պօլինեզիայում: Երեսն ի վայր գետնին ընկնիլը հպատակութեան նշան է համարւում Սանդզիչեան կղզիների բնակիչների մէջ, և թագաւորն էլ այդպէս է վարուել Կուկին առաջին անգում պատահելիս:

Հին աշխարհի պատմական ազգերի տարեզրութիւնների մէջ ևս կարելի է բազմաթիւ օրինակներ գտնել, այսպէս՝ «Մեծփերութէ անկառ ի վերայ երեսաց իւրոց և երկիր նոպագ Դաւթայ» (Բ. Թագ. թ. 6). Բիւթինի թագաւորը երեսն ի վայր ընկառ Հոռմէ ծերակոյսի առջն:

Հայոց Տիգրան Բ. թագաւորը յիրրե եմուտ անզը Հետիոտս, հանեալ զթագն ի գլխոյն խոնարհեցաւ, երկիր եպագ Պոմպէիշ \*):

Երբեմն պարտուածի յազՊողի առջն կատարած այս վարձունքն աւելի ուժեղ տաղաւորութիւն է գործում, երբ մի քանի անգամ կը կնուում է Սրբ մի օրինակը տեսնում ենք Բիւթանի սովորութիւնների մէջ. Շնրանց ինն անգամ երեսի վրայ են ընկնում ուշանի առջն,—աս ողջոյնի մի ձև է, որ կատարում են հպատակները, ամէն անգամ երբ թոյլ է արւում ներկայանալու նրան:

Ամէն մի ծէս՝ գործադրութեան միջոցին հետպնտէ կը ճառատուելով, կարող է մթագնել իւր սկզբանական ընյթը, միհնոյն ձեռվ, ամենախորընի յարգանքի ողջոյններն էլ կարող են դանաւ համեմատաբար աւելի թեթև յարգանքի արտայայտութիւն: Լիովին երեսի վրայ ընկնելու համար, անհրաժեշտ է նախ չոքել և ապա՝ զլուխը կացնել գետնին, երբ կամենում ենք կանգնելու գարձեալ անհրաժեշտ է բարձրացնել ծնկները, նախքան զլուխը բարձրացնելը և ուսների վրայ կանգնելը: Հետեաբար՝ այս դրութիւնը կարող է նկատուել որպէս ուռքն ընկնելու մի թերի ձև: Այսպիսի ողջոյններ շատ տարածուած են: Մովավինեայ նեղըների մէջ մերը մի բնիկ գնում է տեսնելու իւր մեծաւորին, և կամ պատահում է նրան, անմիջապէս չոքում է և երեք անգամ հաճրուրում զետինը: Բրասների թագաւորը ցանկանալով արտայայտել իւր ստորագրութիւնը՝ իրոսի թագաւորին, չի խօսում նրա հետ առանց չոքելու և զլուխը գետնին կպցնելու: Լմբումմայում, կոնքում, ողջոյն արտայայտում է թեթև ծափով և ստորագրուածը, այս անելով հանդերձ՝ ընկնում է ծնկների վրայ իւր մեծաւորի առջն և համբուրում նրա ոտի ապարանջան:

\*.) Դիսն, լիշ. Գարագաշն Քննական պատ. Հայոց Բ հ. եր 126:

Յանախ այս ողջոյնի խոնարհութիւնը աւելանում է նրանով, որ մարդիկ երեսը քսում են գետնին: Նիզերի ստորին ընթացքում, բնիկները, ի նշան խորին յարգանքի, երեսի վրայ ընկնում են և գլուխը խփում գետնին: Հնումը, ոռուաց կայսեր թագագրութեան միջցին, ազնուականութիւնը հաւատարմութեան երգումն էր տալիս՝ գլուխարհնեցնելով գլուխը և նրա ոտների առջե ճակատը գետնին խփելով: Չինաստանում այժմ նկատում է ողջոյնի ութ ձև, մինչ մինչ մինչ առելի ստորացուցիչ, հինգերորդի ժամանակ՝ չըբում են և գլուխը գետնին խփում, վեցերորդին՝ չըբում են և երեք անգամ գլուխը գետնին խփում, եօթներորդին երկու անգամ առելի են խփում, իսկ ութերորդին՝ երեք անգամ առելի. վերջին ողջոյն արգում է թագաւորին և երկնքին: Հրէաների մէջ ևս ողջոյնի կրկնելը մինոյն նշանակութիւնն ունէր. Յակոբը «Երկիր եպագ եօթն անգամ ի վերայ երկրի՝ մինչև մեր ձենալ առ եղայրն իւրա» (Մննդոց Լ. 3):

Հայոց արքունիքում թագաւորին տովոր էին երկրագագել այգուն այգուն (Աղբենացի):

Մուշեղ Մամիկոնեանը Պարսից Ասորով թագաւորին ներկայանալիս «իրոնարհեցաւ ի վերայ երեսաց իւրոց՝ երկիր եպագ արքայի և կանգնեցաւ» (Մերքսու զլ. Ֆ. եր. 73):

Բնական է, որ պարտուածի կրած այս զբութիւնը, որ ընդունում է ստորուկը արքոջ և հզպատակը արքայակատողի առջն, աղօթողն էլ ընդունում է իւր Աստծու առջն: Երկրպագում են այն էակին, որի շնորհը կամնում են զրաւել, լինի դա տեսանելի, թէ աներևոյթ: «Անկաւ Արքանամ ի վերայ երեսաց իւրոց» Աստծու առջն, երբ ուխտ կապեց նրա հետ. (Մննդոց Ժ. 17), «Նարուգոտունուր անկաւ ի վերայ երեսաց իւրոց և երկիր եպագ Պանիւլի» (Թան. Բ. 46): Մինոյն Նարուգոտունուրը կանգնելով սկէ պատկերը՝ մահուան սպառնալիք էր տալիս այն բոլորին՝ որ ոչն անկեալ երկիրպագանիցէ պատկերին ոսկւոյ, անկցի ի հոսք հրոյն բորբոքելոյ»: Այսպէս և ձևամբողջական երկրագութիւն, որ կատարում է թագաւորների առջն, տեղի է ունենում և սատուածութեան առջն:

Հայ զիւղացիները և թաղաբացիներից շատ շատերը եկեղեցում և սրբերի տաշ սովորաբար ծունդ են չըբում և համբուրում զետինը և կամ որբի գերեզմանը:

Մոնղոլներն իրենց կուռքերին աղօթելիս ճականերին երեք անգամ քսում են գետնին: Եապօնացիներն իրենց տաճարներում չըցըսում են և մեծ յարգանքով ու յամը խոնարհնեցնում իրենց զլուիները՝ գետնին: Աղօթող մահմեականներին ներկայացնող պատկերը բաւական ծանօթացնում է այդպիսի դիրքի հետ:

Աէ.—Մէջքի և երեսի վրայ ընկնելով կատարած երկրպատկութիւնից անցնենք ողջոյնի միւս ձևերին, որոնք նոյնպէս, վերոյիշեալների նման, արտայայտում են ընդդիմուդրելու համեմատական անկարողութիւն Մի քանի գէպքերում թոյլ է արւում փօխել գիրքը. այսպէս Դահոմէում ըրաբձր աւագանին թագաւորի առջն պատկում է հին հռոմէացիների նման trisiliniumի վրայ: Երբեմն նրանք պատկում են փորի, կամ հանգստանաւոր նպաստակով, կանգնում չորս թաթերի վրայ: Դիրքանն ասում է, թէ մերսիկացիների մէջ պըպըզելը համարւում էր յարգանքի նշան, ինչպէս մեզանում ծնրադրութիւնը: Գեանին պատկան մեալը յարգանքի նշան է համարւում Նոր-Կալիդոնիայի, ինչպէս և Ֆիջի և Տավիսի կղզիների բնիկների մէջ:

Վանում հայերը մեծերի մօտ բարեկ բռնած կանգնում են, և երբ ստիպում են նոտել, մի ծունկը ցցում են, միւսը չորսում և անձայն լուս մնում, զլուխը փոքր ինչ խոնարհած \*):

Շարժուելու անհրաժեշտութիւնն այս տեսակ վարժունքի մէջ փոփոխութիւններ է ձգում: Դահոմէում, երբ մերձնում են թագաւորին, սորում են ինչպէս ոչ կամ չոքէ չոք առաջ գնումն: Երբ Սիրամացին մեծաւոր ներկայութեամբ ցանկանում է փօխել իւր անզը, թաթերի և ծնկների վրայ է առաջ գնումն ետայրում ստորագրեալը իւր մեծաւորի մօտից հեռանալիս պէտք է յափոթերս գնայ մինչև նրա տեսքից հեռանալը: Սիրնոյնը կատարւում է և զուլուի թագաւորի ներկայութեամբ, ուր կանայք ևս նոյնն են անում: Լօանզոյում ոչ միայն արքունիքումն է այս վարժունքը պահանջում կանանցից, այլ և սրանք չեն համարձակում խօսել իրենց ամուսինների հետ առանց չոքելու, և մօտենում են նրանց միայն յափսիթերս գնալով: Սրա հարեւան պետութեան մէջ զոյութիւն ունեցող սովորութիւնը ցոյց է տալիս այս երկրպագութեան աստիճանաւորումը, և իւրաքանչիւր աստիճանի նշանակութիւնը: Դակրօն, այն կինը, որ Դահոմէի թագաւորի պատգամները տանում է Մէկիւն, թագաւորի առաջ չորս թոթերի վրայ է ման գալիս, և օրէնք է, որ նա չորս թաթերի վրայ յառաջանայ դէպի Մէկիւն, իսկ ստորագաս անձերի առջև նա միայն ծունկ է չորսում: իսկ վերջիններս իրենց հերթին չորսումանու դիրք են ընդունում:

Այսպէս՝ մենք հետեղողաբար հասնում ենք երկրպագութեան ձևի կրնամամբ յառաջացած ողջոյնի մի նոր ձևի, որ շատ տա-

\* ) Տես Ազգ. Հանգ. Ա. Ար. 187:

բաժուած է: Խնջուկո որ կատարեալ երկրպագութեան ձեից անցնուամ են մահմառական հաւատացեալի ընդունած ձեին, որ յենուամ է զլուխը գետնին, այնուէ էլ սրանից մենք անցնուամ ենք չորս թաթերի վրայ կանգնելու դիրքին, և ապա՝ պարզ ծնրադրութեան: Թէ արդարեն ծնրադրութիւնը բազմաթիւ տեղերում և ամէն ժամանակ եղիլ է և է քաղաքական, ընտանեկան և կրօնական յարգնիք արտայատեկու մի ձե՛ կարիք չկայ. ապացոյց բերելու նկատենք, միայն, որ նա, և առաջները, և այժմ, միանուամ է կառավարչական բռնակալ կազմակերպութեան հետ, օրինակ Աֆրիկայում, ուր այս մշտական ծնրադրութիւնների պատճառով, որ տեղի են ունենուած չոր գետնի վրայ, գագուչների ծնկները ներբանի պէս կոպտամուռ են նոյնը և Սապոնիայում, ուր աւագանին թագաւորի մօսից հնուանալիս՝ ծնկների վրայ չոքած է քայլում: Չինաստանում փոխարքայի որդիները... երբ անցնուամ էին իրենց հօր վրանի առջևով. չորում էին և խոնարհում երեք անգամ, երես դէպի գետին գարձնելով: Միջին դարերում եւրոպայում, ճորտերը չոքուած էին իրենց տէրերի, և վասարներն իրենց պետերի առջև:

Երկու ծնկի վրայ կանգնելուց մարդիկ անցել են մի ծնկի վրայ կանգնելուն, որ աւելի պակաս ստորացումն է արտայայտում, և աւելի մօսենում է կանգնած դիրքին. այստեղեց էլ անցել է միայն ծունկը խոնարհեցնելուն: Թէ արդարեն ողջոյնի այս ձեւը յառաջցել է վերոյիշեալ ձեի կրճատումից, պարզ երնուամ է եապոնական սովորութիւններից:

Սապոնացիները միմեանց հանգիղելիս՝ իրենց յարգանքն արտայայտում են նրանով, որ ծալում են ծունկը. իսկ երբ կամենում են արտայայտել մի առանձին յարգանք՝ չորում են և խոնարհում մինչև զետին: Նրանք այս երբէք չեն անում փողոցներում, բաւականանալով միայն այն շարժումնով, որ ցոյց է տալիս չօքելու ցանկութիւնն ըրմելի անձի ողջունելիս նրանք այնուամ են ծալում ծնկները՝ որ մատները քսուամ են զետին:

Մինոյնը, նոյնչափ, եթէ ոչ աւելի, նկատում է և Չինաստանի սովորութիւնների մէջ, ուր ողջոյնի արդէն կարգաւորուած աստիճանների մէջ՝ երրորդ ձեւը՝ ծունկ խոնարհեցնելն է, չորրորդը՝ լիակատար ծնրադրութիւնը: Վերոյիշեալ օրինակներից պարզ կարելի է նկատել, որ եւրոպացիների մէջ այժմ յարատելող այն սովորութիւնը, որ իրը բաղաքավարութիւն գործադրուած դէպի կանայք, և որ երբեմն նաև գործադրուել է աղամարդկանց վերաբերմամբ, այն reverence ը, (որ կայանում է աջ ուղը յետանելու մէջ), մի ծնկի վրայ չոքելու վերացած սովորութեան մեացորդ է:

Մնում է քննել մարմեկի խոնարհումը, որ յարակից է ծնրադրութեան: Եւ որովհետև սա առաջին շարժումն է, որ պէտք է անել կատարեալ երկրպագութեան անցնելու, ուստի սա ևս վերջինն է, որ յարատեում է, երբ երկրպագութիւնն աստիճանաբար կրնատուելով անհետանում է: Շատ տեղերում զտնում ենք այս անցման հետքերը: Սուսուների մէջ, մեծաւորի կանայքն անդամ ամուսնի հետ խօսելում են, և ձեռները յնուում իրենց ծնկներին: Միննոյն դիրքն են ընդունում նրա մօսով անցնելիս: Մասօն կդպում, երբ մինն ուղիղ կանգնած անցնում է այս սենեակով, ուր մի զօրապես է նստած, համարուում է անարդանքի նըշան, պէտք է կունաալ և խոնարհեցնել զլուխը:

Տաճկահայաստանում Տաճիկի խոնակաների ազգեցութեան տակ Հայերը այնքան խոնարհեցրել են զլուխները, որ վկերն երկարել են, այս աւելի ցայտուն կերպով երևում է վանեցիների վրայ<sup>\*)</sup>:

Հին Մեքսիկացիները, իրենց ժողովներում, սովորաբար զըպըզում էին իրենց կառավարչի առջև, և երբ հեռանում էին, խոնարհեցնում էին իրենց զլուխը: Վերջապէս չինական ծիսարանի մէջ երկրորդ համար ողջոյնը, որ աւելի պակաս ստորացուցիչ է քան այն, որ կայանում է ծունկ չոփելու մէջ, կատարուում է կունաարզ և ձեռները միմինաց միացնելով: Յիշելով, որ Հնդկաստանցու խոնարհ սալամի սաստիկ խոնարհաւան, որ Եւրոպայում մեծ յարգանցի նշան է համարուում, և զլիսի չափաւոր խոնարհաւան մէջ որ համակրանքի նշան է նկատուում, կան անցման աննկատելի աստիճաններ, մենք չպէտք է կասկածինք, որ մեր մտերժական, հազիր նկատելի զլիսի շարժմունքը վերջին մացորդն է սախնական երկրպագութեան:

Երկրպագութեան այս ամենայն տեսակ կրնատութերը. որ տեսնում ենք քաղաքական կամ հասարակուկան հպատակութիւն, յարգանք, արտայայտելու դէպքերում, գտնուում են նաև կրօնական հպատակութեան արտայայտութեան պաշտամունքի մէջ: Բաստիճան պատմում է, թէ Կոնգոյի բնիկները մեծաւորի հետխօսելիս չոքում են, երեսը մի կողմ զարձնում, ձեռները պարզում դէպի այս անձը, որին դիմում են և ծափ տալիս՝ հէնց որ սկսում են խօսել: Սրանք կարող էին իրը նախատիպ ծառայել այս նկարների համար, որոնցով եզիպատացի բրմերը զարդարել են իրենց տաճարների պատերը, այնքան զգալի է այդ նկարների և այս երկրի այժմեան իրականութեան մէջ եղած նմանութիւնը:

<sup>\*)</sup> Ազգագրուկան Հանդէս XX եր. 118.

Նմանօրինակ երեսյթներ կարելի է նկատել նաև նորոգայի կրօնական ժէսերի մէջ: Այդահղ նկատում է ծնրադրութիւն՝ երկու ժնկի վրայ, մարմինի և զլիսի խոնարհութեան թրիստոսի անունը յիշած միջոցին:

Մինույնը տեղի է ունենում և հայերիս մէջ: Մենք տեսնում ենք, որ ուխտաւորները հեռուից, հենց որ նկատում են ուխտաւորին, ժունը են չոքում, երկրպագում, հանում կոշիկները և զլուխը բաշ արած յառաջնում, և երբ մատենում են, չոքում են և այսպէս ուխտատեղու չուրջը պատռում, չոքում, երեսը քսում գետնին: Սովորական երկրպագութիւնը միանգամայն ընդհանրացած է, իսկ մարմինն ու զլուխը խոնարհելը միացած է խաչակնքուելու սովորութեան հետ:

